ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 օգոստոսի 2018 թ., ԿԽ-006/18/3

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ԵՎ ԴՐՈՇԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 8-րդ կետով, 19-րդ կետի 21-22-րդ ենթակետերով,

հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի՝ Արդարադատության ակադեմիայի խորհրդանիշը հաստատելու մասին 03.03.2014թ. թիվ 7-Ա որոշումը, օտարերկրյա գործընկերների, միջազգային կառույցների հետ հարաբերություններում Արդարադատության ակադեմիայի տարբերանշանի՝ օտարալեզու տարբերակների, որպես անհատականացման միջոց՝ Արդարադատության ակադեմիայի դրոշի կիրառման անհրաժեշտությունը, ինչպես նաև նշված հարցերի վերաբերյալ Ռեկտորի առաջարկությունները՝ Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհուրդը

Որոշում է.

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի տարբերանշանի եռալեզու՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն տարբերակների ձևը և նկարագրերը՝ ըստ հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի դրոշի ձևը և նկարագիրը՝ ըստ հավելված 2-ի:

Նախագահ՝ ***Ե. Խունդկարյան***

Հավելված 1
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2018թ. օգոստոսի 30-ի
թիվ ԿԽ-006/18/3 որոշման

Խորհրդի նախագահ Ե.Խունդկարյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ԵՌԱԼԵԶՈՒ՝ ՀԱՅԵՐԵՆ, ԱՆԳԼԵՐԵՆ, ՌՈՒՍԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՁԵՎԸ և ՆԿԱՐԱԳՐԵՐԸ

1. Արդարադատության ակադեմիայի տարբերանշանի եռալեզու տարբերակներն ունեն հետևյալ նկարագիրը՝ սպիտակ հիմնագույն ունեցող շագանակագույն եզրերով շրջանակի մեջ՝ շրջանագծի մեջտեղում տեղադրված է Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 03.03.2014թ. թիվ 7-Ա որոշումամբ հաստատված տարբերանշանի պատկերը: Նկարագրված շրջանակը տեղադրված է սպիտակ հիմնագույն ունեցող շագանակագույն եզրերով ավելի մեծ շրջանակի մեջ, որի մեջ երկու շրջանակների միջև առկա լայնությամբ՝ ձախից աջ՝
վերևի կիսաշրջանում գրված են՝
հայերեն տարբերակում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
անգլերեն տարբերակում՝ «REPUBLIC OF ARMENIA»
ռուսերեն տարբերակում՝ «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ» բառերը,
ներքևի կիսաշրջանում գրված են՝
հայերեն տարբերակում՝ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
անգլերեն տարբերակում՝ «ACADEMY OF JUSTICE»
ռուսերեն տարբերակում՝ «АКАДЕМИЯ ЮСТИЦИИ» բառերը:

2. Արդարադատության ակադեմիայի տարբերանշանի եռալեզու տարբերակները ունեն հետևյալ ձևը՝



Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2018թ. օգոստոսի 30-ի
թիվ ԿԽ-006/18/3 որոշման

Խորհրդի նախագահ՝ Ե.Խունդկարյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴՐՈՇԻ ՁԵՎԸ և ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Արդարադատության ակադեմիայի դրոշն ունի հետևյալ նկարագիրը՝ սպիտակ հիմնագույն ունեցող ուղղանկյան մեջտեղում տեղադրված է Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 03.03.2014թ. թիվ 7-Ա որոշմամբ հաստատված տարբերանշանը:
2. Արդարադատության ակադեմիայի դրոշն ունի հետևյալ ձևը՝